պատմութեան, որ կըփափագէիր չարադրուած տեսնել,—այդ մասին են քեզ յետոյ կըգրեմ. իսկ վասն դպրատուն հաստատելոյ ըստ երրոպական լեզուաց, այսպէս գիտասջիք, զի մեր լեզուաւս դպրատուն, զոր ունիմք ի սուրբ Աթոռոջս՝ հազիւ պահեմք հաստատուն, ըստ որում չէ մեզ ձեռնտու որպիսութիւն և կացութիւն երկրի»։ Ինձ ինչ որ վերաբերում է մի այնպիսի դպրոց հաստատելուն, ուր երրոպական լեզուներ էլ աւանդուէին, իմացիր, որ մենք ունինք Մայր Աթոռում մի դըպրատուն մեր լեզուն ուսուցանելու համար, բայց այդ էլ հազիւ ենք հաստատուն պահում, որովհետև երկրիս որպիսութիւնն և կացութիւնը ձեռնտու չեն մեզ։ Այդ մի դժուար գործ է այժմ, իսկ յետոյ ինչ կլինի—Աստծուն միայն յայտնի է»։

Յովսէփ արքեպիսկոպոսի ցանկութեամբ կաթուղիկոսը հասցնում էր նրան զանազան գրքեր ու ձեռագիրներ և շատ խելացի խորհուրդներ տալիս հրատարակելի գրքերի մասին։

Յովսէփ արքեպիսկոպոսին թողնելով Ռուսաց քաղաքական շրջաններում աշխատելու յոգուտ հայկական հարցի, Ղուկաս կաթուղիկոսը այդպիսով չհրաժարուեց Ռուսաստանում գտնուած իւր եռանդուն ներկայացուցչի վերայ ունեցած ազդեցութիւնից։ Այդ կողմից միանգամայն ինքնուրոյն մնալով, նա ինչպէս երևում է դօքտ. Ռէյնեգսի քաղաքական յանձնարարութեան արդիւնքներից, Յովսէփ արքեպիսկոպոսի ձեռքում կոյր գործիք չդարձաւ նոյն իսկ այն դէպքում, երբ վերջինս գործում էր Ռուսաց կառավարութեան նախաձեռնութեամբ և առաջարկութեամբ։ Հայերի դաղթը Ռուսաստան, Նախիջևան և Գրիգորիոպոլ քաղաքների հիմնարկութիւնը, հոգևոր ատեանի հաստատութիւնն Աժտարխանում և ռուսարնակ հայոց նոր թեմի ներքին վարչութեան ուրիշ գործերը կաթողիկոսի յարատև հոգատարութեան առարկաներ էին և նիւթ նրա թղթակցութեան սրբազանի հետ։

Սակայն այդ գործնական խնդիրներից զատ՝ Ղուկաս կաթողիկոսն իւր չնորհալի աշխատակցի հետ նամակներ փոխանակելիս, մանաւանդ վերջին տարիները, ստէպ ստէպ չօշափում էր և նրա ապագայի հարցը։ Յովսէփ արքեպիսկոպոսը ինքն էլ մտատանջ էր լինում այն մասին, թէ ինչ կերպով պիտի չարունակէ հայաստանեայց եկեղեցուն ծառայել։ Նա փափագում էր մի օր բազմել Էջմիածնի Մայր Աթոռի վրայ, որի բարձունքից կարող էր մի աւելի լայն ասպարէզ բանալ ծա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան